ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«21» 05 2019 թ.

№ [illegible]/1926

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի տնօրեն
Հ. Ֆախրայիին
ք. Երևան, Կոմիտաս 31, բն. 36
էլ. հասցեն՝ mariyamedco@yahoo.com
ՀՎՀՀ 01564583

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/9-3 ծածկագրով գնման պայմանագրի այսուհետ՝ նաև Պայմանագիր) և դրա հիման վրա 05.06.2018թ. կնքված N1 համաձայնագրի այսուհետ՝ նաև Համաձայնագրի) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2018թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել *5 փուլի* ***«Վիրաբուժական գործիքներ /Ցիրկուլյար կոր կտրող-կարող ապարատ, 33մմ»***, *3 փուլի* ***«Վիրաբուժական գործիքներ /Ցիրկուլյար կարող կտրող գործիք 25 մմ/»***, *1 փուլի* ***Վիրաբուժական գործիքներ /Գծային կարող ապարատ դանակով/ և*** *1 հավաքածու* ***Վիրաբուժական գործիքներ /Գծային կարող ապարատ, դանակով/,*** սակայն նշված ապրանքատեսակների մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ին միակողմանի մասնակի լուծում է ԳՀԱՊՁԲ-9/9-3 ծածկագրով պայմանագիրը և դրան կից 05.06.2018թ. կնքված N1 Համաձայնագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել ***42,942.5 (քառասուներկու հազար ինը հարյուր քառասուներկու ՀՀ դրամ հիսուն լումա)***՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ ***129,400 (հարյուր քսանինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ*** որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ